

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՌԱՔԵԼ ԱՐՏԱԿԻ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(Իրավահամեմատական վերլուծություն)

ԺԲ.00.04-«Դատավարական իրավունք (Դատարանակազմություն,
քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,
կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն,
օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2013

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРАКЕЛЯН АРАКЕЛ АРТАКОВИЧ

ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ И ДЕЯТЕЛЬНОСТИ СОВЕТА ПРАВОСУДИЯ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
(СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)

Автореферат

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.04-«Процессуальное право—судоустройство, гражданский
процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура,
теория оперативно-разведывательной деятельности»

Ереван-2013

Ատենախոսության թեման հաստատվել է եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի գիտական խորհրդի նիստում
Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների
դոկտոր **Գ. Մ. Բադիրյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ **Ս. Ա. Դիլբանդյան**
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ա. Ռ. Հարությունյան**
Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ դատախազության դպրոց

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2013 թ-ի
հոկտեմբերի 29-ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող
ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.
Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2013 թ-ի սեպտեմբերի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ

Ա.Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена на заседании Ученого совета
Европейской Региональной Образовательной Академии

Научный руководитель:

доктор юридических наук

Г. М. Бадирян

Официальные оппоненты:

доктор юридических наук, доцент

С. А. Дилбандян

кандидат юридических наук, доцент

А. Р. Арутюнян

Ведущая организация:

Школа прокуратуры Республики Армения

Защита состоится 29 октября 2013 г., в 14⁰⁰ часов на заседании специали-
зированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном
университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников
библиотеки ЕГУ.

Автореферат разослан 28 сентября 2013 г.

Ученый секретарь специализированного совета,
доктор юридических наук, доцент

А.Г. Вагаршян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ուսումնասիրման թեմայի արդիականությունը: Ժողովրդավարության հաստատման, իրավունքի գերակայության, օրենքի իշխանության վրա հիմնված պետության կառուցման համար անհրաժեշտ է այդ նպատակներին համահունչ և արդյունավետ գործող պետական մարմինների համակարգի ստեղծում, իսկ դատարանի՝ որպես պետական մարմնի անկախության հիմնական գրավականը, դատավորների նշանակման անկողմնակալ, արդարացի և թափանցիկ համակարգ ունենալն է, ինչի շնորհիվ կբարձրանա նաև դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահությունը:

ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների 1-ին փուլում կարևորվեց ժողովրդավարական, իրավական համակարգ ունեցող երկրների փորձի ընդօրինակմամբ, հիմնականում դատական իշխանության ներկայացուցիչներից կազմված, ինքնակառավարվող մարմնի ստեղծումը, որը դատավորների նշանակման, նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու առումով պետք է հանդես գար որպես անկողմնակալ, արդարացի և թափանցիկ պետական մարմին՝ հանձինս Արդարադատության խորհրդի: Արդարադատության խորհուրդը՝ որպես դատական իշխանության կենտրոնական մարմին, իր ամրագրումն է ստացել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական գրեթե բոլոր երկրների սահմանադրություններում:

Արդարադատության խորհուրդն իր գործունեության բնույթով զբաղեցնում է առաջնային և կարևոր տեղ արդարադատության արդյունավետ իրականացման գործում, քանզի այս մարմնի լիազորությունների մեջ է մտնում, մասնավորապես՝ դատավորների նշանակման, ծառայողական առաջխաղացման, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու և արդարադատությանն առնչվող այլ հարցեր: Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված, անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք¹: Եվ այս իրավունքի իրականացման գործում Արդարադատության խորհուրդն ունի առաջնային դերակատարում, ինչպես նաև պատասխանատվություն է կրում այդ իրավունքի իրականացման համար: Նույնիսկ Պլատոնը, խոսելով դատավորների և դատավարության մասին, նշում է. «Ցանկացած պետություն դադարում է պետություն լինելուց, եթե նրանում դատարանները կազմակերպված են ոչ պատշաճ ձևով»²: Դարեր շարունակ այս հարցը ունեցել է լուծման երկու տարբերակ, առաջինը՝ դատավորների ընտրությունն է, իսկ երկրորդը՝ նրանց նշանակումը: Յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիայի 6-րդ հոդվածի 1-ին մաս:

² Տե՛ս Платон, Законы, М., 1999 г., с. 217:

այս հարցի լուծման իր տարբերակը:

Հետազոտության արդյունքում հնարավոր կլինի ներկայացնել արտասահմանյան երկրներում ՀՀ Արդարադատության խորհրդին համարժեք մարմնի՝ Դատական խորհրդի կազմավորման և գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունավետության ապահովմանն ուղղված առկա լավագույն փորձը և օրենսդրական բարեփոխումները, ինչն էլ իր հերթին հնարավորություն է տալիս մեզ համալիր կերպով ուսումնասիրել ՀՀ Արդարադատության խորհրդի կազմավորման և գործունեության հիմնախնդիրները: Համեմատական իրավագիտության առումով, թեմայի հետազոտությունը հնարավորություն կտա մեզ, ուսումնասիրելով այս մարմնին առնչվող զարգացած երկրների կուտակած փորձը, հանդես գալ ՀՀ Արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ առաջարկություններով և վերջինս համապատասխանեցնել նաև եվրոպական օրենսդրության պահանջներին: Նույն Պլատոնն իր «Օրենքների ժողովածու»-ում համեմատում էր Հունաստանի տարբեր պոլիսների օրենքները և այդ համեմատության արդյունքում է առաջարկել իդեալական պետության կառուցվածքը:

Արդարադատության իրականացումը պետության դատական իշխանության արդյունավետ իրականացման հետևանք է: Յուրաքանչյուր երկրում արդարադատության իրականացման արդյունավետությունը կախված է նրանից, թե ում կողմից է այն իրականացվում: Խոսքը, իհարկե, վերաբերվում է առաջին հերթին դատավորներին, որոնք պատասխանատվություն են կրում արդարադատության անաչառ և անկողմնակալ իրականացման համար: Այստեղ կարևոր է հասկանալ, թե ինչպես են վերջիններս ստանձնում այդ պարտականությունը, պետական որ մարմիններն են մասնակցում նրանց նշանակմանը և ինչպիսի հարաբերակցություն կա վերջիններիս միջև: Պատմության տարբեր ժամանակահատվածներում այս հարցն ունեցել է տարբեր լուծումներ: Օրինակ՝ համաձայն 1977 ՀԽՍՀ «Դատարանակազմության մասին» օրենքի 8-րդ հոդվածի Հայկական ԽՍՀ բոլոր դատարանները կազմվում էին դատավորների և ժողովրդական ատենակալների ընտրության հիմունքներով³:

Որպես կանոն հասարակական կարգերի փոփոխությունը բերում է մարդկային աշխարհայացքի փոփոխության, տեսակետների և մոտեցումների արդիականացման անհրաժեշտության: Ինչպես արդեն նշվեց Հայաստանի Հանրապետությունում Արդարադատության խորհրդի ստեղծման համար հիմք հանդիսացավ ժողովրդավարական և իրավական համակարգ ունեցող երկրների փորձը: Մինչդեռ ժամանակի ընթացքում անհրաժեշտություն եղավ վերանայել այս մարմնի կազմավորման և գործունեության կարգը, ինչն իրականացվեց դատաիրավական բարեփոխումների 2-րդ փուլում:

³ Տե՛ս 1977 թվականի ՀԽՍՀ «Դատարանակազմության մասին» օրենքի 8-րդ հոդված:

Ակնհայտ է, որ այսօր ՀՀ-ում իրականացվում են բազմաբնույթ և լայնածավալ բարեփոխումներ՝ հիմնականում եվրոպական կառույցների հետ համագործակցության շրջանակներում: Կարևոր է հատկապես նշել՝ հարկային, մաքսային, ուստիկանության համակարգերում, ինչպես նաև արդարադատության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները: Դա նշանակում է, որ մեր երկիրն աստիճանաբար անցնում է Եվրոպական միության չափորոշիչներին (օրենսդրության ռեցեպցիա): Եվրոպական իրավունքը արդիականության առավել դինամիկ իրավական համակարգերից է: Միության կատարելագործվող նորմատիվ բազան, լինելով վերջինիս գործունեության արդյունք, կոչված է միննույն ժամանակ կատարելու այդ կազմակերպության շարունակական ինքնակատարելագործման և ինքնազարգացման գործիքի գործառույթները⁴: Այս առումով ևս սույն աշխատությունը հնարավորություն կտա մեզ ուսումնասիրել այս մարմնի կազմավորման և գործունեությանը վերաբերող եվրոպական տարբեր մոդելների առանձնահատկությունները: Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի ստեղծումը և կատարելագործումը եվրոպական շատ երկրներում կարելի է վստահորեն համարել՝ որպես եվրոպական միատեսակ դատական համակարգ ունենալու գաղափարի իրականացման արդյունք: Այս մարմնին առչվող բարեփոխումներն առաջին հերթին նպատակ ունեն վերահաստատել մի կողմից դատավորների նշանակման, նրանց առաջխաղացման ընթացակարգերի թափանցիկության մակարդակի բարձրացման ցանկությունը և մյուս կողմից էլ վերացնել արդարադատության իրականացման գործընթացի մեկուսացումը հասարակությունից: Ցանկացած երկրում իրականացվող բարեփոխում պետք է բավարարի որոշակի հասարակական պահանջմունքների և չպետք է լինի ինքնանպատակ: Իրավական պետության կայացման և հասարակական հարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ է ընդունել կատարյալ, սոցիալական արդարության պահանջներին համապատասխան օրենքներ: Յուրաքանչյուր ժողովուրդ, ազգ, հասարակություն ունի իր բարոյական արժեքները, իրավագիտակցության աստիճանն ու մտածողությունը և արտասահմանյան երկրների ընդօրինակմամբ փոփոխությունների իրականացումը միշտ էլ հղի է եղել վտանգներով: Սակայն եվրոպական իրավական համակարգում դատական ողջ իշխանության ձևավորման ու գործունեության հիմքում ընկած են սկզբունքային ընդհանուր մոտեցումներ, որոնք և պայմանավորում են դատական իշխանության համակարգի տարբեր ինստիտուտների գործակցության բնույթը⁵:

Հեղինակի համոզմամբ ՀՀ Արդարադատության խորհուրդը (Դատական խորհուրդը) բոլորի համար պետք է լինի քաղաքականապես ու ներհամակարգային

⁴ Տե՛ս Հարությունյան Ա.Շ., Եվրոպական Միության իրավունքի հիմունքները, (սահմանադրական իրավունք), Դասագիրք, Երևան, Տիգրան Մեծ, 2011, էջ 4:

⁵ Տե՛ս Հարությունյան Գ., Դատական իշխանություն, Համակարգային գործակցություն եվրոպական զարգացումների փորձից, Երևան, Նժար, 2002, էջ 17:

կապերի առումով չեզոք և պատասխանատու մարմին⁶:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը ՀՀ Արդարադատության խորհուրդն է: Ուսումնասիրության օբյեկտով էլ պայմանավորված՝ ուսումնասիրության առարկան են կազմում Արդարադատության խորհրդի կազմավորումը և գործունեությունը կարգավորող իրավական նորմերի ամբողջությունը, որոնք ամրագրված են՝ ՀՀ, ինչպես նաև տարբեր արտասահմանյան երկրների սահմանադրություններում և օրենքներում:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ուսումնասիրության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի կազմավորման և գործունեության իրավական հիմունքների և իրավակիրառ պրակտիկայի համալիր ուսումնասիրությունն է, ինչպես նաև արտասահմանյան երկրներում այս մարմնի արդյունավետ գործունեության առանձնահատկությունների բացահայտումը: Վերոնշյալ նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

1. ՀՀ Արդարադատության խորհրդի ստեղծման պատմության ուսումնասիրությունը, հատկապես՝ այս մարմնի ստեղծման ժամանակահատվածում երկրում առկա քաղաքական և իրավական իրավիճակի բացահայտման տեսանկյունից, ինչպես նաև ՀՀ Արդարադատության խորհրդի՝ որպես դատաիրավական քաղաքականության սուբյեկտ դիտարկելու հարցի պարզաբանումը: Փորձ կկատարվի նաև ներկայացնելու ՀՀ Արդարադատության խորհրդի և դատական իշխանության ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների բնույթը:

2. Արտասահմանյան երկրներում Արդարադատության խորհրդին համարժեք մարմնի (Դատական խորհրդի) կազմավորման, գործունեության և առկա լավագույն փորձի, ինչպես նաև խորհրդի կազմավորման և գործունեության վերաբերյալ եվրոպական երկրներում լայն տարածում գտած իրավական մոդելների ուսումնասիրությունը:

3. ՀՀ Արդարադատության խորհրդի կազմավորման կարգի և գործունեության օրենսդրական առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է ՀՀ Արդարադատության խորհրդի կազմավորման և գործունեության իրավական կարգավորման և առկա հիմնախնդիրների համակարգային վերլուծության և ներկայացման մեջ: Սույն ատենախոսությունն իր առաքելությամբ և բովանդակությամբ Հայաստանի Հանրապետությունում առաջին համալիր հետազոտությունն է, որն ամբողջությամբ նվիրված է ՀՀ Արդարադատության խորհրդին:

Այս մարմնի գործունեության ուսումնասիրությունը հնարավորություն կտա

⁶ Sté' u Renoux T. S., Les Conseils Supérieurs de la Magistrature en Europe, Group d'études et de recherches sur la justice constitutionnelle, Paris, 1999, p. 10:

մեզ հասկանալու ՀՀ Արդարադատության խորհրդի առջև դրված խնդիրների իրականացման իրական ընթացքը, վերջինիս գործունեության արդյունավետությունը, առկա թերություններն ու բացերը, դրանց վերաբերյալ արտասահմանյան երկրների մոտեցումներն ու տեսակետները, կուտակած լավագույն փորձն ու խնդիրների արդյունավետ լուծման տարբերակները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Դատախիրավական քաղաքականությունը՝ որպես իրավական քաղաքականության տարատեսակ, բնորոշվում է որպես պետական մարմինների, ոչ պետական կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեություն, որն ուղղված է պետության դատական և իրավական համակարգի կատարելագործմանը և արդյունավետության բարձացմանը: Ելնելով վերոգրյալից՝ հեղինակը առաջարկում է, որ ՀՀ Արդարադատության խորհուրդը հանդես գա՝ որպես դատախիրավական քաղաքականություն մշակող և իրականացնող պետական մարմին: Երբ վերլուծում ենք ՀՀ Արդարադատության խորհրդին վերաբերող Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ամրագրված լիազորություններն ու գործառույթները, ինչպես նաև դատական և իրավական քաղաքականության մշակմանը և ձևավորմանը խորհրդի մասնակցության ու ներգրավվածության աստիճանը, ապա կարող ենք վստահորեն փաստել, որ ՀՀ Արդարադատության խորհուրդը դատախիրավական քաղաքականության սուբյեկտ չէ: Միաժամանակ անընդունելի է այն, որ 2012-2016 թվականների ՀՀ դատական և իրավական քաղաքականության մշակման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կազմում ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի ներգրավվածությամբ պետք է պայմանավորվի ՀՀ Արդարադատության խորհրդի մասնակցությունը դատախիրավական քաղաքականության ձևավորմանը:
2. Համեմատական վերլուծության հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանում առկա իրականությունը, ՀՀ Արդարադատության խորհրդի կազմավորման կարգի կատարելագործման և գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվում են հետևյալը հայեցակարգային մոտեցումները՝
 - ✓ ՀՀ Արդարադատության խորհուրդը հիմնականում պետք է կազմված լինի՝ արեստավարժ իրավաբաններից, համալսարանական պրոֆեսորներից, փաստաբաններից, հոգեբաններից, երկար տարիների դատավորի աշխատանքային փորձ ունեցող անձանցից: Վերջինս կհանդիսանա նաև դատական իշխանության նկատմամբ հասարակական վերահսկողության ձև: Իսկ այսօր ՀՀ Արդարադատության խորհրդի կազմում դատավորները մեծամասնություն են կազմում: Այս ամենը նպաստում է դատական իշխանությունը դատավորների ձեռքում կենտրոնացնելուն:
 - ✓ Խորհրդի կազմում պետք ստեղծվեն առանձնացված ստորաբաժանումներ,

որոնք պատասխանատու կլինեն՝ համապատասխանաբար դատավորների նշանակման, նրանց առաջխաղացման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերի համար:

- ✓ Արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետության, ինչպես նաև խորհրդի աշխատանքների համակարգվածության և ճիշտ կազմակերպման նպատակով, խորհրդի կազմում պետք է ստեղծվի համապատասխան աշխատակազմ, այլ ոչ թե վերջինիս գործառույթները պետք է իրականացվի վճռաբեկ դատարանի կազմում գործող դատական դեպարտամենտի կողմից:
- ✓ Արդարադատության խորհուրդը դատարանների կազմակերպման և գործունեության հարցում պետք է ունենա ծանրակշիռ և առաջնային դերակատարում, իսկ իր կողմից ընդունված որոշումները պետք է կրեն ոչ թե խորհրդատվական, այլ իմպերատիվ բնույթ:
- ✓ Արդարադատության խորհուրդը պետք է ակտիվ համագործակցություն ծավալի աշխարհի տարբեր երկրների Դատական խորհուրդների հետ, ինչը կնպաստի առկա լավագույն փորձի փոխանակմանը:
- ✓ ՀՀ Արդարադատության խորհուրդը պետք է ունենա իր պաշտոնական էլեկտրոնային կայքը, որտեղ համընդգրկուն ձևով ներկայացված կլինեն խորհրդի գործունեությանն առնչվող ցանկացած տեղեկատվություն:
- ✓ ՀՀ Արդարադատության խորհուրդը պետք է ունենա յուրաքանչյուր տարվա համար իր գործողությունների ծրագիրը, ինչպես նաև համապատասխան օրենսդրական բարեփոխումների արդյունքում հնարավորություն ունենա յուրաքանչյուր տարվա ավարտին հանդես գալու հաշվետու զեկույցով:

3. Դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեությունը չի կարող սահմանափակել դատավորի անկախությունը: Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ՀՀ Արդարադատության խորհրդի նիստերի հրավիրումը և վարումը, ինչպես նաև դատավորների ընդհանուր ժողովը և դատարանների նախագահների խորհուրդը նախագահելը, խախտում է դատական իշխանության ներքին անկախության սկզբունքը: Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից նման լիազորությունների միաժամանակ իրականացումը դիտվում է ոչ արդյունավետ (**both position demanded full attention**)⁷: Վճռաբեկ դատարանի նախագահը պետք է ի պաշտոնե պատասխանատու լինի վճռաբեկ դատարանի առջև դրված խնդիրների լուծման և վճռաբեկ դատարանի արդյունավետ գործունեության ապահովման համար, այլ ոչ թե ամբողջ դատական համակարգի կառավարման համար:

4. ՀՀ «Դատական օրենսգրքում» Արդարադատության խորհրդին վերաբերող իրավական նորմերում անհրաժեշտ է կատարել այնպիսի փոփոխություններ, ո-

⁷ «Յուրաքանչյուր պետական պաշտոն պահանջում է համապատասխան ուշադրություն»:

րոնք այս մարմնին հնարավորություն կտան լինել անկախ, իսկ իր կողմից ընդունված որոշումները կլինեն համապարտադիր բնույթի, ինչպես նաև կարևոր իրավական բազա կհանդիսանան դատական և իրավական քաղաքականության ձևավորման ու դատաիրավական նպատակաուղղված բարեփոխումների իրականացման համար: Վերոնշյալի արդյունքում առաջարկվում է հետևյալը`

- ✓ Դատարանի դատավորների թափուր տեղի համար առաջարկված թեկնածուների կողմից առաջարկ ընդունելու վերաբերյալ թեկնածուն իր գրավոր համաձայնությունը կամ անհամաձայնությունը նշանակման վերաբերյալ պետք է ներկայացնի միայն ՀՀ Արդարադատության խորհրդի աշխատակազմին, այլ ոչ թե վճռաբեկ դատարանի նախագահին:
- ✓ Պետք է բացառվեն, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր տեղի համար օրենսդրությամբ սահմանված հերթից դուրս հնարավորություն ստանա առաջարկելու մեկ այլ առաջին ատյանի դատարանի դատավորի:
- ✓ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը պետք է ընդլայնվի թվաքանակի առումով: Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են խորհրդի անդամ երկու դատավոր և մեկ իրավաբան-գիտնական: Այստեղ նույնպես ստացվում է մի իրավիճակ, երբ դատավոր անդամները, որոնք ի վերջո հանդիսանում են դատավորների ընդհանուր ժողովի անդամներ, կազմում են մեծամասնություն, ինչը խաթարում է ողջ դատական համակարգի ներհամակարգային կապերը:
- ✓ Ընդհանրացնելով առաջարկվող օրենսդրական բարեփոխումները` որպես բարեփոխումների անկյունաքար առաջարկվում է բացառել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից Արդարադատության խորհրդի գործունեությանը միջամտության ցանկացած հնարավորություն:

Ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության

չրջանակներում ուսումնասիրությունը կատարվել է ընդհանուր և հատուկ մեթոդների օգնությամբ: Նախ և առաջ օգտագործվել են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են` պատմաիրավական, իրավահամեմատական, իրավատրամաբանական, համակարգա-կառուցվածքային, վիճակագրական և այլն:

Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել տարբեր երկրների Դատական խորհուրդներին, դատարանակազմությանը և դատական համակարգին նվիրված աշխատություններ, ատենախոսություններ և գիտական հոդվածներ:

Մասնավորապես` ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են ինչպես հայրենական հատկապես` Ա. Բաղդասարյանի, Ա. Երիցյանի, Ա. Հարությունյանի, Ա. Ղամբարյանի, Ա. Վաղարշյանի, Գ. Բաղիրյանի, Գ. Դանիելյանի, Գ. Հարությունյանի, Գ. Ղազինյանի, Խ. Թորոսյանի, Հ. Խաչատրյանի, Հ. Մանուկյանի, Ռ. Ավագյանի, Ռ. Պետրոսյանի, Ս. Դիլբանդյանի, Վ. Նազարյանի, այնպես էլ օտարազգի,

հատկապես՝ Ա. Բեգնասյուկի, Ա. Դաշուղի, Ա. Ջոնստոնի, Գ. Շելդոնի, Դ. Դանիելսկիի, Թ. Ռենուի, Լ. Ֆրիդմանի, Հ. Աբրահամի, Մ. Կլեանդրովի, Ի. Պետրուխինի, Ռ. Դավիդի, Վ. Շվեցովի, Վ. Ռադչենկոյի, Վու. Վոերմանսի և այլոց աշխատությունները:

Հեղինակը օգտվել է նաև համացանցի տարբեր կայքերում տեղադրված գիտական հոդվածներից, ատենախոսությունների սեղմագրերից, մամուլում հրատարակված հոդվածներից և հայտարարություններից, ինչպես նաև պետական բարձրաստիճան պաշտոնյաների արած հայտարարություններից:

Ատենախոսության նորմատիվ հիմքն են կազմում հիմնականում՝ Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան տարբեր երկրների սահմանադրությունները, համապատասխան օրենքներն ու այլ իրավական փաստաթղթերը:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Թեկնածուական ատենախոսությունը կարող է օգտագործվել բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ դատարանակազմություն, համեմատական իրավագիտության առարկան դասավանդելիս, ինչպես նաև համապատասխան մասնագետների կողմից գիտական հետազոտություններ իրականացնելիս: Աշխատանքը կարող է հետաքրքրություն ներկայացնել ՀՀ Արդարադատության խորհրդի գործունեությամբ հետաքրքրված անձանց համար: Ատենախոսության արդյունքում արված առաջարկությունները կարող են օգտագործվել գործող համապատասխան օրենսդրության կատարելագործման համար:

Ուսումնասիրության արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված առանձին գիտական հոդվածներում: Վերոնշյալ հոդվածներում արտացոլվել են ատենախոսության մի շարք կարևորագույն դրույթներ: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի համեմատական իրավագիտության և դատավարական իրավունքի ամբիոնի 20.02.2013 թվականին կայացած նիստում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը ձևավորվել է, հաշվի առնելով ուսումնասիրվող թեմայի նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ատենախոսության ուսումնասիրության առարկան: Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը հնարավորություն են տալիս առավել բազմակողմանի և ամբողջական կերպով բացահայտել ուսումնասիրության առարկա դարձած նյութը: Այն կազմված է՝ ներածությունից, երեք գլխից, ընդհանուր՝ յոթ պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հապավումների ցանկից և հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, հետազոտության նպատակը և խն-

դիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի տեսական ու մեթոդաբանական հիմքերը, ուսումնասիրության արդյունքների փորձարկումը, ձևակերպված է ստացված գիտական արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

Աշխատանքի առաջին՝ «ՀՀ Արդարադատության խորհուրդը դատական իշխանության համակարգում» վերտառությամբ գլխում, համընդգրկուն ձևով ներկայացված են ՀՀ Արդարադատության խորհրդի ստեղծման ժամանակահատվածում առկա քաղաքական իրավիճակը և իրավական նախադրյալները, որի պայմաններում ստեղծվեց այս մարմինը, այնուհետև վերլուծության է ենթարկվել այն հարցը, թե ինչքանով է ՀՀ Արդարադատության խորհուրդը հանդես գալիս որպես դատաիրավական քաղաքականության սուբյեկտ, իսկ վերջում անդրադարձ է կատարվել ՀՀ Արդարադատության խորհրդի և դատական իշխանության ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների բնույթին և առանձնահատկություններին:

Ատենախոսության առաջին գլխի առաջին՝ «Արդարադատության խորհրդի ստեղծումը» պարագրաֆում ներկայացված են այն քաղաքական իրավիճակը և իրավական նախադրյալները, որոնց պայմաններում ստեղծվեց ՀՀ Արդարադատության խորհուրդը: Գաղտնիք չէ, որ ՀՀ Արդարադատության խորհրդի անկախության ապահովումը դատական իշխանության անկախության ապահովման կարևորագույն երաշխիքներից է: Դատական իշխանության անկախության երաշխիքների շարքում կարևոր նշանակություն ունի դատական համակարգի կազմավորումը: Ցանկացած երկրում դատավորների անկախությունը սկսվում է նրանից, թե վերջիններիս ով և ինչպես է նշանակում: Այս կապակցությամբ ժողովրդավարական և արդարադատության ոլորտում ավանդույթներ ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ դատական անկախության ապահովման համար պետք է մշակվեն Դատական խորհուրդների կազմավորման այնպիսի եղանակներ, որոնք կապահովեն դատարանների անկախությունը, ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր մարմիններից: Դատավորների ընտրության նպատակով ներկայումս առավել տարածված են Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի տիպի մարմինների ստեղծումը: Սովորաբար այդպիսի խորհուրդների կազմի մեջ մտնում են իշխանության բոլոր երեք թևերի ներկայացուցիչներ, ինչպես նաև անկախ անդամներ, որոնք այդ ոլորտում աչքի են ընկնում իրենց ձեռնահասությամբ և հեղինակությամբ:

Ամփոփելով՝ հեղինակը եզրակացրել է, որ ՀՀ Արդարադատության խորհուրդը ստեղծվել է քաղաքական և իրավական շատ բարդ պայմաններում, ինչը չէր կարող նպաստել խորհրդի գործունեության արդյունավետությանը և խորհրդի գործունեության վերաբերյալ հասարակական ընկալումներին: Ինչ խոսք, այսօր այս

մարմինը ՀՀ դատական իշխանության անկախության ապահովման լրացուցիչ երաշխավորն է, որն իրականացնում է երեք հիմնական գործառույթ՝ դատավորների նշանակման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու և խորհրդատվական: Հեղինակի կարծիքով այս մարմինը չպետք է հանդիսանա պետական (դատական) իշխանության տարբեր թևեր ներկայացնող պետական մարմինների պայքարի թատերաբեմ, այլ այն պետք է լինի դատական իշխանության համակարգում քաղաքականություն մշակող և իրականացնող կոլեգիալ մարմին, որը ունակ կլինի բարձրացնել դատավորների պրոֆեսիոնալիզմը, ապահովել դատական իշխանության անկախությունը և արդարադատության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Ատենախոսության առաջին գլխի երկրորդ՝ «Արդարադատության խորհուրդը որպես դատաիրավական քաղաքականության սուբյեկտ» պարագրաֆում նախ և առաջ, ներկայացվել են դատաիրավական քաղաքականության հասկացության և բաղկացուցիչ տարրերի վերաբերյալ գիտական մոտեցումները, այնուհետև անրադարձ է կատարվել այն հարցին, թե ինչքանով է ՀՀ Արդարադատության խորհուրդը հանդես գալիս որպես դատաիրավական քաղաքականության սուբյեկտ:

Ամփոփելով վերոգրյալը՝ արվել է հետևյալ եզրակացությունը, որ ՀՀ Արդարադատության խորհուրդը՝ չնայած դատաիրավական քաղաքականության հասկացության և հատկանիշների վերաբերյալ առկա գիտական մոտեցումների, իրականում չի՝ դիտարկվում որպես դատաիրավական քաղաքականության սուբյեկտ: Մինչդեռ, վերջին տասնամյակների ընթացքում աշխարհի շատ երկրներում ստեղծվեցին Դատական խորհուրդներ և պետական մարմիններ, որոնց հիմնական նպատակն էր ապահովել համապատասխան հակակշիռ դատական անկախության և պատասխանատվության միջև: Եվրոպական իրավագիտության մեջ տարածված է այն մոտեցումը, որ հենց Դատական խորհուրդներից է կախված դատական համակարգի որակը⁸: Եվ այս նպատակների իրականացման համար անհրաժեշտ է կատարել օրենսդրական լուրջ փոփոխություններ, ինչպես նաև ՀՀ Արդարադատության խորհրդին ակտիվ ներգրավել դատաիրավական քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացում:

Հեղինակի կողմից դատաիրավական քաղաքականությունը բնորոշվել է որպես դատական իշխանության արդյունավետ իրականացմանն ուղղված մոտեցումների, գաղափարների, սկզբունքների, նպատակների, խնդիրների, կարգավորման ենթակա այլ հարցերի սահմանված կարգով ամրագրելու, դրանց իրագործմանն միտված եղանակների մշակման և իրականացման գործընթաց:

Ատենախոսության առաջին գլխի երրորդ՝ «Արդարադատության խորհրդի և դատական իշխանության ինքնակառավարման մարմինների փոխհարաբերու-

⁸ Տե՛ս <http://home.uchicago.edu//tginsburg/pdf/articles/GuardingTheGuardians.pdf> (Համեմատական իրավունքի ամերիկյան ամսագիր The Guardians):

յունները» պարագրաֆում ներկայացվել է, նախ և առաջ՝ դատական իշխանության ինքնակառավարման մարմինների օրենսդրությամբ նախատեսված գործառույթները, իսկ դրանից հետո էլ վերլուծության կարգով ներկայացվել է դատական իշխանության ինքնակառավարման մարմինների և Արդարադատության խորհրդի փոխհարաբերությունների բնույթը:

Դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեությունը չի կարող սահմանափակել դատավորի անկախությունը: Ներկայումս ՀՀ դատական իշխանության ինքնակառավարման մարմիններն են՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը, որը կազմված է Հայաստանի Հանրապետության բոլոր դատավորներից, և դատարանների նախագահների խորհուրդը, որի անդամներն են առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահները, վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահները⁹:

Ամփոփելով ատենախոսության առաջին գլխի՝ ուսումնասիրության առարկա դարձած նյութը, հեղինակը եզրակացրել է, որ

1. ՀՀ Արդարադատության խորհուրդը ստեղծվեց քաղաքական և իրավական շատ բարդ պայմաններում (նորանկախ հանրապետության սկզբնական ժամանակահատվածում քաղաքական պայքարի անհաշտելիությունը, բնակչության սոցիալական վիճակի վատթարացումը, հասարակական դժգոհությունները, հանցավորության մեծ ծավալը, Ղարաբաղյան պատերազմը, տնտեսական բնույթի շրջափակումները) ինչը չէր կարող նպաստել խորհրդի գործունեության արդյունավետությանը, հասարակական ճիշտ ընկալումներին և իր առջև դրված խնդիրների իրականացմանը: Ստեղծված իրավիճակն անհնարին դարձրեց դատաիրավական բարեփոխումների արդյունավետ իրականացումը:

Ինչ խոսք, ՀՀ Արդարադատության խորհուրդը ստեղծվեց որպես ՀՀ դատական իշխանության անկախության ապահովման լրացուցիչ երաշխավոր և դատական իշխանության կենտրոնական մարմին, սակայն ժամանակի ընթացքում փաստացի կորցրեց այդ դերակատարումը:

2. ՀՀ Արդարադատության խորհուրդը՝ չնայած դատաիրավական քաղաքականության հասկացության և հատկանիշների վերաբերյալ առկա գիտական մոտեցումների իրականում չի դիտարկվում որպես դատաիրավական քաղաքականության սուբյեկտ: Դատաիրավական քաղաքականությունը և դատական քաղաքականությունը հարաբերվում են ինչպես ամբողջն ու մասը:

Դատաիրավական քաղաքականությունը հեղինակը բնորոշել է որպես դատական իշխանության արդյունավետ իրականացմանն ուղղված մոտեցումների, գաղափարների, սկզբունքների, նպատակների, խնդիրների, կարգավորման ենթակա

⁹ Տե՛ս ՀՀ Նախագահի 2012 թ հունիսի 30-ի ՆԿ-96-Ս կարգադրություն «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին»:

այլ հարցերի սահմանված կարգով ամրագրելու, դրանց իրագործմանն միտված եղանակների մշակման և իրականացման գործընթաց:

3. ՀՀ Արդարադատության խորհուրդը, որը դիտվում է որպես դատական իշխանության անկախության ապահովման լրացուցիչ երաշխավոր, իրական որևէ հնարավորություն չունի հակակշռելու դատական իշխանության ինքնակառավարման մարմիններին: Փաստորեն, ՀՀ Արդարադատության խորհրդի ստեղծումը դառնում է ինքնանպատակ, իսկ ավելի կոնկրետ՝ հանդես է գալիս որպես դատական իշխանության ինքնակառավարման մարմիններին կից գործող մարմին, որի որոշումները և գործունեությունը կախված է այդ մարմիններից, քանզի այս մարմինների փոխհարաբերություններում և ընդհանրապես ողջ դատական համակարգում ստեղծվել է ներհամակարգային կախվածության մթնոլորտ:

Ատենախոսության երկրորդ՝ «Դատական խորհրդի կազմավորման կարգը և գործունեության առանձնահատկությունները արտասահմանյան երկրներում» վերստառությամբ գլխում ներկայացվում է արտասահմանյան երկրներում Դատական խորհրդի կազմավորման կարգի (§1) և գործունեության առանձնահատկությունները (§2), ինչպես նաև անդրադարձ է կատարվում խորհրդի կազմավորման կարգի վերաբերյալ եվրոպական երկրներում լայն տարածում գտած երկու մոդելներին:

Հատկանշական է, որ այս ինստիտուտը ներմուծել են նաև հետխորհրդային որոշ երկրներ, մասնավորապես՝ Ղազախստանի, Ուկրաինայի և Մոլդովայի Հանրապետությունները¹⁰: Ռուսաստանի Դաշնությունը նման մարմին չի ստեղծել: Սույն գլխում ներկայացվում են **Բելգիայի, Բուլղարիայի, Իռլանդիայի, Իսպանիայի, Իտալիայի, Լեհաստանի, Մոլդովայի, Շվեդիայի, Պորտուգալիայի, Վրաստանի, Ուկրաինայի և Ֆրանսիայի** Դատական խորհուրդների կազմավորման կարգերը:

Եվրոպական տարբեր երկրներում Արդարադատության խորհուրդը ունի իր անվանումը: Որոշ երկրներում այն անվանում են դատական խորհուրդ (**Council for the Judiciary**), իսկ որոշ երկրներում էլ մագիստրատուրայի խորհուրդ (**Council for the Magistrature**): Ըստ որոշ տեսաբանների Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդը գործում է, որպես միջնորդ կառավարության և դատական համակարգի միջև՝ դատական համակարգի անկախությունը երաշխավորելու նպատակով¹¹: Իսկ որոշ եվրոպական երկրներում էլ (Ֆրանսիա, Իտալիա) այն հիմնականում լուծում է դատավորների նշանակման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցեր, իսկ օրինակ՝ Շվեդիայում, Դանիայում դրա հիմնական առաքելությունը կայանում է դատարանների ֆինանսական և վարչական կառավարման, բյուջետային, ինչպես նաև դատավորների կրթության և վերապատ-

¹⁰ St' u Конституция Украины, Казахстана, Республики Молдова в кн., «Новые Конституции стран СНГ и Балтии, сборник документов», М., 1998:

¹¹ St' u Voermans W., Councils for the judiciary in EU countries, European Commission /TAIEX/ Tilburg University/Scoordijk Institute, June 1999, p. 7:

րաստմանն առնչվող հարցերի լուծումը:

Եվրոպական մայրցամաքում գործում է Դատական խորհրդի կազմավորման և գործունեության երկու իրավական մոդելներ՝ հյուսիսեվրոպական և հարավեվրոպական: Այս տարանջատումը պայմանավորված է պետության կառուցվածքի և պետական կառավարման համակարգի առանձնահատկություններով: Հյուսիսեվրոպական երկրների շարքին են դասվում, մասնավորապես՝ Իռլանդիան, Դանիան, Շվեդիան, իսկ հարավեվրոպական երկրների շարքին են դասվում՝ Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան և Պորտուգալիան¹²:

Ամփոփելով ատենախոսության երկրորդ՝ «Դատական Խորհրդի կազմավորման կարգը և գործունեության առանձնահատկությունները արտասահմանյան երկրներում» վերտառությամբ գլուխը, հեղինակը եզրակացրել է, որ

1. Արտասահմանյան երկրներում Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդը հիմնականում կազմված է պրոֆեսիոնալ իրավաբաններից, համալսարանական պրոֆեսորներից, փաստաբաններից, հոգեբաններից, երկար տարիների դատավորի աշխատանքային փորձ ունեցող անձանցից: Վերջինս օգնում է նաև հասարակության լայն շերտերին՝ դատական իշխանության նկատմամբ իրականացնել հասարակական վերահսկողություն: Խորհրդի կազմում գործում են առանձնացված ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու են համապատասխանաբար՝ դատավորների նշանակման, նրանց առաջխաղացման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերի համար: Իսկ այսօր ՀՀ Արդարադատության խորհրդի կազմում դատավորները մեծամասնություն են կազմում: Այս ամենը նպաստում է դատական իշխանությունը դատավորների ձեռքում կենտրոնացմանը:

2. Արտասահմանյան տարբեր երկրներում այս մարմինն իրականացնում է, մասնավորապես՝ տարբեր դատական ատյաններում դատավորների նշանակման, առաջխաղացման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատական համակարգի կառավարման՝ այդ թվում ֆինանսական միջոցների, ինչպես նաև խորհրդատվական տարբեր բնույթի գործառույթներ:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ արդարադատության խորհրդի կազմավորման կարգը և գործունեության առանձնահատկությունները» վերտառությամբ գլխում համապատասխանաբար ներկայացվում են ՀՀ Արդարադատության խորհրդի կազմավորման կարգի առանձնահատկությունները (§1), այնուհետև օրենսդրական վերլուծության տեսքով անդրադարձ է կատարվում ՀՀ Արդարադատության խորհրդի գործունեության առանձնահատկություններին (§2):

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ որպես ներքին սպառնալիք նշվում է պետական կառավարման համակարգի արդյունավետության նվա-

¹² St' u Voermans W., Councils for the judiciary in EU countries, European Commission/TAIEX/ Tilburg University/Scoordijk Institute, June 1999, p. 11:

գումը, դատախիրավական համակարգի նկատմամբ վստահության պակասը: Վերջինիս համաձայն Հայաստանի Հանրապետությունը գտնվում է անցումային շրջանում և բարեփոխումների ակտիվ փուլում: Պետական կառավարման համակարգի արդյունավետության կարևոր ցուցանիշ է դրա նկատմամբ հասարակության վստահության մակարդակը¹³: Դատական իշխանության արդյունավետ, անաչառ և անկախ գործունեությունը բացառիկ կարևոր նշանակություն ունի Հայաստանի համար:

Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ՝ դատարանակազմությունը ներառում է երեք կարևոր բաղադրիչներ: 1-ինը՝ գործող դատարանների ցանկն է, 2-րդը՝ դատարանների հիմնադրման ընթացակարգը և 3-րդը՝ դատարանների ներքին կառուցվածքը¹⁴: Հեղինակը առաջարկում է այդ ցանկը համալրել չորրորդ բաղադրիչով՝ դատարանակազմության համար պատասխանատու մարմնի ստեղծումը՝ որը դատարանակազմության համակարգում առաջնային բաղադրիչ է:

ՀՀ Արդարադատության խորհրդի դերն ու նշանակությունը դատարանակազմության մեջ ճիշտ հասկանալու համար՝ հեղինակը ուսումնասիրել է նրա կազմավորման կարգը և լիազորությունների շրջանակը: Ի՞նչ բնույթի լիազորություններ ունի այս մարմինը, արդյո՞ք դրանք կրում են առաջնային բնույթ: Արդարադատության խորհրդի սահմանադրությամբ նախատեսված լիազորությունները վերլուծելիս ատենախոսը հանգել է այն եզրակացության, որ վերջինիս լիազորությունները երեք տեսակի են: 1-ին՝ կապված դատավորների նշանակումների հետ, 2-րդ՝ դատավորների կարգապահական պատասխանատվության և 3-րդ՝ խորհրդատվական լիազորություններ: Մասնավորապես՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի ՀՀ Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով՝

1. կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումներ.

2. եզրակացություն է տալիս ներկայացված դատավորների թեկնածությունների վերաբերյալ.

3. առաջարկում է վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահների թեկնածությունները.

4. Հանրապետության Նախագահի հարցմամբ կարծիք է հայտնում ներման

¹³ Տե՛ս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, 2007 թվականի փետրվարի 7-ի ՀՀ Նախագահի ՆՀ-37-Ն հրամանագիր:

¹⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010թ., էջ 939:

հարցերի վերաբերյալ.

5. դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին:

ՀՀ դատախիզավական բարեփոխումների 2-րդ փուլում կատարվեցին լուրջ սահմանադրական փոփոխություններ, մասնավորապես՝ Արդարադատության խորհրդի կազմավորման կարգում: Այսպես, եթե մինչև սահմանադրական բարեփոխումները Արդարադատության խորհուրդը նախագահում էր հանրապետության Նախագահը, իսկ արդարադատության նախարարը և ՀՀ գլխավոր դատախազը հանդիսանում էին խորհրդի փոխնախագահները, ապա բարեփոխումների արդյունքում այս ամենը վերացավ: Այսպիսով, ՀՀ Արդարադատության խորհրդին վերապահվեցին միայն դատական իշխանության և դատական համակարգին վերաբերող լիազորություններ: Եթե օրենսդիր և գործադիր իշխանությունները իրականացվում են համապատասխանաբար Ազգային ժողովի և Կառավարության կողմից, ապա կարելի է փաստել, որ որպես դատական իշխանության իրականացման երաշխավոր հանդես է գալիս Արդարադատության խորհուրդը:

Ամփոփելով ատենախոսության երրորդ գլուխը հեղինակը եզրակացրել է, որ Այսպիսով, կարել է եզրակացնել, որ

1. ՀՀ Արդարադատության խորհրդի կազմավորման կարգը 2005 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում էականորեն փոխվել է: Մասնավորապես՝ ՀՀ Արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը այլևս չեն հանդիսանում խորհրդի փոխնախագահներ և այս առումով ՀՀ դատական համակարգը դառնում է լիովին անկախ իշխանության մյուս թևերից: Իսկ ՀՀ ԱԺ-ի կողմից խորհրդի կազմում իրավաբան-գիտնական նշանակելու փաստը ապահովում է օրենսդիր իշխանության կողմից դատական իշխանությանը զսպելու և հակակշռելու հնարավորությունը:

2. Չնայած կատարված բարեփոխումների՝ Ֆրանսիայի և եվրոպական այլ երկրների Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդների հետ համեմատած, Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդում դատավորները մեծամասնություն են կազմում, ինչը, կարծում ենք խոչընդոտում է դատական համակարգի ներքին անկախությանը և նպաստում է դատական համակարգում ներհամակարգային կախվածության ստեղծմանը: Բացի այդ խորհրդի կազմում գործող առանձնացված ստորաբաժանումներում դատավորները նույնպես կազմում են մեծամասնություն: Մինչդեռ զարգացած երկրներում, որտեղ այս մարմինն անցել է զարգացման և կատարելագործման երկարատև ճանապարհ, խորհրդի կազմում ընդգրկված են երկարատև մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող

իրավաբաններ, իրավունքի մասնագետներ, փաստաբաններ և պետական կառավարման և դատական ոլորտում ոլորտում երկար տարիների աշխատանքային փորձ և բարձր հեղինակություն ունեցող անձինք: Կարծում ենք, որ ՀՀ Արդարադատության խորհուրդը նույնպես հիմնականում պետք է կազմված լինի պրոֆեսիոնալ իրավաբաններից, համալսարանական պրոֆեսորներից, փաստաբաններից, հոգեբաններից, երկար տարիների դատավորի աշխատանքային փորձ ունեցող անձանցից: Վերջինս կօգնի նաև հասարակությանը դատական իշխանության նկատմամբ իրականացնել հասարակական վերահսկողություն և այս ամենը կնպաստի դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության վերականգնմանը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից Արդարադատության խորհրդի նիստերի հրավիրումը, վարումը, ինչպես նաև դատավորների ընդհանուր ժողովը և դատարանների նախագահների խորհուրդը նախագահելը խախտում է դատական իշխանության ներքին անկախության սկզբունքը: Վճռաբեկ դատարանի նախագահը օրենսդրությամբ սահմանված կարգով ունի լայն լիազորություններ, ինչպես դատական համակարգի կառավարման, այնպես էլ Արդարադատության խորհրդի գործունեության ուղղորդման տեսանկյունից: Մինչդեռ վերջինս պետք է ի պաշտոնե պատասխանատու լինի միայն վճռաբեկ դատարանի առջև դրված խնդիրների լուծման և դատարանի արդյունավետ գործունեության ապահովման համար: ՀՀ «Դատական օրենսգրքում» Արդարադատության խորհրդին վերաբերվող իրավական նորմերում առկա են անհասկանալի դրույթներ, որոնք առաջին հերթին խաթարում են ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացումը: Վերոնշյալ իրավական նորմերը հնարավորություն են տալիս ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ունենալ առաջնային և ուղղորդող դերակատարում դատական իշխանության համակարգում: Որպես առաջիկա իրավական բարեփոխումների անկյունաքար առաջարկում են բացառել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից Արդարադատության խորհրդի գործունեությանն միջամտության ցանկացած հնարավորություն:

4. ՀՀ Արդարադատության խորհրդի կազմավորման և գործունեության արդյունավետության բարձրացման ուղղված առաջարկությունները կարող են կյանքի կոչվել հետևյալ ձևերով՝

✓ Սահմանադրական բարեփոխումների միջոցով (ԱԽ-ի կազմավորման մասով).

✓ Օրենսդրական բարեփոխումների միջոցով (ԱԽ-ի գործունեության կարգի մասով).

✓ Դատաիրավական բարեփոխումների ծրագրում ներառելու միջոցով (Դատական իշխանությունում ԱԽ-ի դերակատարման բարձրացման տեսանկյունից):

Ատենախոսական աշխատանքի հետազոտման առարկայի համակարգված ուսումնասիրության հիման վրա կատարվել են հետևյալ եզրակացությունները.

1. ՀՀ Արդարադատության խորհուրդը՝ որպես սահմանադրական մարմին ունի իր Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունների շրջանակը, ինչպես նաև օրենսդրությամբ ամրագրված գործունեության կարգը: Վերջինս ստեղծվեց քաղաքական բարդ պայմաններում և իրավական ու դատական համակարգի արմատական վերակազմավորման ժամանակահատվածում: Չնայած խորհրդի ստեղծման սկզբնական նպատակների՝ կարելի է վստահաբար ասել, որ ՀՀ Արդարադատության խորհուրդը չունի անհրաժեշտ լիազորությունների շրջանակ, որպեսզի հանդես գա որպես պետության դատաիրավական քաղաքականություն ձևավորող և իրականացնող մարմին: ՀՀ Արդարադատության խորհուրդը չպետք է հանիսանա պետական իշխանության տարբեր թևերի պայքարի թատերաբեմ, այլ այն պետք է լինի իշխանության բոլոր թևերից անկախ պետական մարմին, որն ունակ կլինի բարձրացնել դատավորների պրոֆեսիոնալիզմը, ապահովել դատական իշխանության անկախությունը և արդարադատության արդյունավետությունը: Այսօրվա ստեղծված իրականությունը, ինչպես նաև հաշվի առնելով պետության դատական և իրավական քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը ՀՀ Արդարադատության խորհրդի ներգրավվածության աստիճանը համոզված ենք, որ ՀՀ Արդարադատության խորհուրդը պետք է հանդես գա դատաիրավական քաղաքականության ակտիվ սուբյեկտի դերում, ինչը կնպաստի պետության դատական և իրավական համակարգի կատարելագործմանը և արդյունավետության բարձացմանը: Դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեությունը չի կարող սահմանափակել դատավորի անկախությունը: Իսկ օրենսդրության վերլուծությունը և հայկական իրականությունը հաշվի առնելով կարելի է եզրակացնել, որ այսօր դատական իշխանության ինքնակառավարման մարմինների օրենսդրական լիազորությունները հնարավորություն են տալիս այդ մարմիններին ստեղծելու դատական համակարգում կառուցվածքային ենթակայության և ներհամակարգային կախվածության մթնոլորտ: ՀՀ Արդարադատության խորհրդի և դատական իշխանության ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները կրում են ձևական բնույթ: Անհրաժեշտ է վերանայել դատավորների ինքնակառավարման մարմինների լիազորությունները, Արդարադատության խորհրդի հետ փոխհարաբերությունների բնույթը՝ ապահովել դատավորների ներքին անկախությունը և նպաստել դատական իշխանության ինքնակառավարման երաշխիքների զարգացմանը¹⁵:

2. ՀՀ Արդարադատության խորհուրդը կազմված է հիմնականում դատական իշխանության ներկայացուցիչներից և խորհրդի կազմում դատավորները կազմում

¹⁵ Տե՛ս ՀՀ Նախագահի 2012 թ. հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրություն «Հայաստանի Հանրապետության իրավական եվ դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը եվ ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին»:

են մեծամասնություն: Խորհրդի կազմում գործող առանձնացված ստորաբաժանումներում դատավորները նույնպես կազմում են մեծամասնություն: Այս ամենը նպաստում է դատական իշխանությունը դատավորների ձեռքում կենտրոնացմանը: Մինչդեռ զարգացած երկրներում, որտեղ այս մարմինն անցել է զարգացման և կատարելագործման երկարատև ճանապարհ, խորհրդի կազմում ընդգրկված են երկարատև մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող իրավաբաններ, իրավունքի մասնագետներ, փաստաբաններ և պետական կառավարման ոլորտում բարձր հեղինակություն ունեցող անձինք: Հետազոտության արդյունքում կարծում ենք, որ ՀՀ Արդարադատության խորհուրդը նույնպես հիմնականում պետք է կազմված լինի պրոֆեսիոնալ իրավաբաններից, համալսարանական պրոֆեսորներից, փաստաբաններից, հոգեբաններից, երկար տարիների դատավորի աշխատանքային փորձ ունեցող անձանցից: Վերջինս կօգնի նաև հասարակությանը՝ դատական իշխանության նկատմամբ իրականացնել հասարակական վերահսկողություն և այս ամենը կնպաստի դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության վերականգնմանը:

✓ Արդարադատության խորհրդի աշխատանքները կազմակերպվում են վճարեկ դատարանի կազմում գործող դատական դեպարտամենտի կողմից, ինչը լրացուցիչ իրավական գործիք է վճարեկ դատարանի նախագահի կողմից խորհրդի աշխատանքները վերահսկելու համար:

✓ Արդարադատության խորհուրդը դատարանների կազմակերպման և գործունեության հարցում չունի վճռորոշ դերակատարում և նրա գործառույթները կրում են հիմնականում ընթացակարգային բնույթ: Մինչդեռ ՀՀ Արդարադատության խորհուրդը պետք է ունենա ծանրակշիռ և առաջնային դերակատարում, իսկ իր կողմից ընդունված որոշումները պետք է կրեն ոչ թե խորհրդատվական, այլ իմպերատիվ բնույթ:

✓ Արդարադատության խորհուրդը ներառված չէ միջազգային համագործակցության գործընթացներին, ինչը նույնպես կարևոր նախապայման է հասարակական ճիշտ ընկալումների և իր առջև դրված խնդիրների լուծման համար:

✓ ՀՀ Արդարադատության խորհուրդը չունի իր պաշտոնական էլեկտրոնային կայքը, ինչը նույնպես խեղաթյուրում է այս մարմնի գործունեության հասարակական ընկալումները:

3. ՀՀ Արդարադատության խորհրդի գործառույթներում առաջնային պետք է դիտվի ոչ թե նրա խորհրդակցական բնույթը, այլ նրա կարծիքի առավել կարևորությունը և որոշումների համապարտադիրությունը: Եթե համեմատենք պետական իշխանության այլ թևերի հետ, ապա կտեսնենք, որ ի տարբերություն մյուս երկուսի՝ դատական իշխանությունը, թե՛ իր ձևավորման և, թե՛ գործունեության առումներով ունի հարաբերական անկախություն: Հանրապետության Նախագահին Ազգային ժողովը կարող է անվստահություն հայտնել, ինչպես որ Նախագահը կա-

րող է Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում ցրել Ազգային ժողովը: Այդ դեպքում ինչով է պայմանավորված այն հանգամանքը, որ ամեն դեպքում չնայած Արդարադատության խորհրդի ներկայացրած դատավորների ցուցակների Հանրապետության Նախագահը դրանով կաշկանդված չէ և կարող է ամեն դեպքում կայացնել այլ որոշում, քան ներկայացնում է Արդարադատության խորհուրդը: Ի՞նչ նպատակ էր դնում պետությունն իր առջև ստեղծելով Արդարադատության խորհուրդը: Մարմին, որ կձևավորեր դատական իշխանությունը և կկառավարարեր այն, ինչպես արվում է եվրոպական մի շարք երկրներում, թե ստեղծել մի մարմին, որը խորհրդատվական բնույթ է կրում Հանրապետության Նախագահի համար: Վերջինիս՝ որպես դատավորների անկախության երաշխավորի դերը միշտ պետք է կարևորել, բայց և այնպես Նախագահը ավելի շուտ պետք է վերահսկողի դեր կատարի: Այս առումով ընդօրինակելի է ամերիկյան ֆեդերալ դատավորների նշանակման մոդելը, երբ դատավորի թեկնածությունը առաջարկում է Նախագահը, քվեարկում է Սենատը, իսկ նշանակումը կատարվում է Նախագահի հրամանագրով: Միայն մեկ բացառությամբ, որ Սենատի դերը մեր երկրում կարող է վերապահվել Արդարադատության խորհրդին: Հակառակ դեպքում ստացվել է մի պատկեր, համաձայն, որի դատավորների ընդհանուր ժողովը և դատարանների նախագահների խորհուրդը առավել մեծ դեր ունի դատական իշխանության ձևավորման հարցում, քան թե Արդարադատության խորհուրդը: Չմոռանանք, որ խորհրդի 14 անդամներից 9-ը դատավորներ են և նշանակվում են դատավորների ընդհանուր ժողովի կողմից: Այսինքն՝ դատավորներն են նշանակում դատավորներին: Պետական կառավարումը արդյունավետ է դառնում միայն այն ժամանակ, երբ գործում է հստակ հակակշիռների համակարգ: Համեմատական վերլուծության արդյունքում առաջարկում ենք մեծացնել ՀՀ Արդարադատության խորհրդի անդամների թվաքանակը և սահմանադրական բարեփոխումների արդյունքում խորհրդին վերապահել դատական իշխանության կազմակերպման և կառավարման համար համապատասխան իրավական լծակներ: Մեզ համար կարևոր և անհրաժեշտ է արագ կերպով անցում կատարել դեպի նոր իրավական կառուցակարգերի կիրառումը (**իրավական համակարգերի ռեցեպցիա**), քանզի դանդաղկոտությունը այս հարցերում հանգեցնում է անարդյունավետության: Իսկ իրավական նոր մոտեցումների, խնդիրների իրավական կարգավորման տարբերակների մոտարկումը չպետք է լինի ինքնանպատակ, այլ դրա հիմքում պետք է դրվեն նաև ազգային առանձնահատկությունները, բայց զուտ արդյունավետության և դատական իշխանության ներսում ներհամակարգային կախվածության բացառման տեսանկյունից անհրաժեշտ է փոփոխել խորհրդի կազմավորման կարգը:

4. Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից Արդարադատության խորհրդի նիստերի հրավիրումը, վարումը, ինչպես նաև դատավորների ընդհանուր ժողովը և դատարանների նախագահների խորհուրդը նախագահելը խախտում է դատա-

կան իշխանության ներքին անկախության սկզբունքը: Վճռաբեկ դատարանի նախագահը օրենսդրությամբ սահմանված կարգով ունի լայն լիազորություններ, ինչպես դատական համակարգի կառավարման, այնպես էլ Արդարադատության խորհրդի գործունեության ուղորդման տեսանկյունից: Մինչդեռ վերջինս պետք է ի պաշտոնե պատասխանատու լինի միայն վճռաբեկ դատարանի առջև դրված խնդիրների լուծման և դատարանի արդյունավետ գործունեության ապահովման համար: Դատական օրենսգրքում Արդարադատության խորհրդին վերաբերվող իրավական նորմերում առկա են անհասկանալի դրույթներ, որոնք առաջին հերթին խաթարում են ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացումը: Վերոնշյալ իրավական նորմերը հնարավորություն են տալիս ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ունենալ առաջնային և ուղղորդող դերակատարում դատական իշխանության համակարգում: Որպես առաջիկա իրավական բարեփոխումների անկյունաքար առաջարկվում է բացառել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից Արդարադատության խորհրդի գործունեությանն միջամտության ցանկացած հնարավորություն:

Արդյունքում անհրաժեշտ է ստեղծել այնպիսի դատական խորհուրդ, որը կապահովի անկախ, ինքնուրույն, հաշվետու, թափանցիկ, պրոֆեսիոնալ դատական համակարգի գործունեությունը: ՀՀ Արդարադատության խորհուրդն առաջին հերթին պետք է պաշտպանի դատարաններին և դատավորներին քաղաքական ազդեցությունից և ճնշումներից: Խորհուրդը պետք է յուրաքանչյուր տարի նաև հրապարակի իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Առաքելյան Ա., Արդարադատության խորհրդի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում, «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան, (19), 04.12.2012, 15-19 էջեր,

2. Առաքելյան Ա., ՀՀ արդարադատության խորհուրդը որպես դատաիրավական քաղաքականության սուբյեկտ, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2/163, 2013, 30-35 էջեր,

3. Առաքելյան Ա., Մագիստրատուրայի Բարձրագույն Խորհրդի կազմավորման կարգը (Ֆրանսիա, Բելգիա, Բուլղարիա, Ուկրաինա, Վրաստան), «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 3/163, 2013, 14-17 էջեր:

АРАКЕЛЯН АРАКЕЛ АРТАКОВИЧ
ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ И ДЕЯТЕЛЬНОСТИ СОВЕТА ПРАВОСУДИЯ В
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
(СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)

РЕЗЮМЕ

Изучение деятельности данного органа даст нам возможность понять реальное течение осуществления вопросов, поставленных перед Советом Правосудия РА, продуктивность деятельности последнего, существующие недостатки, подходы и точки зрения в отношении них зарубежных стран, накопленный наилучший опыт и эффективные методы разрешения задач.

Строение диссертации состоит из введения, трех глав, общего из семи параграфов, заключения, списка использованной литературы, аббревиатур и приложений.

Таким образом, анализируя проведенные исследования, автор пришел к следующим выводам:

1. Совет Правосудия РА, как конституционный орган, имеет закрепленную конституцией рамку своих полномочий, а также предусмотренный законодательством порядок деятельности. Последний был создан в сложных политических условиях и в процессе реорганизации правовой и судебной систем. Несмотря на первоначальные цели создания совета, можно уверенно сказать, что Совет Правосудия РА не имеет необходимую рамку полномочий, чтобы выступать как орган государства, формирующий и осуществляющий судебно-правовую политику. Совет Правосудия РА не должен стать ареной борьбы для разных ветвей государственной власти, а он должен стать независимым от всех ветвей власти государственным органом, который способен поднять профессионализм судей, обеспечивать независимость судебной власти и продуктивность правосудия. Несмотря на создавшуюся реальность, и учитывая степень участия Совета Правосудия РА в формировании и осуществлении судебной и правовой политики государства, уверены, что Совет Правосудия РА должен выступать в роли активного субъекта судебно-правовой политики, что поможет усовершенствовать и повысить продуктивность судебной и правовой системы государства. Деятельность органов самоуправления судебной власти не может ограничивать независимость судьи. А учитывая анализ законодательства и армянскую реальность, можно сделать вывод, что сегодня законодательные полномочия органов самоуправления судебной власти дают возможность этим органам создания в судебной системе атмосферу структурного подчинения и внутрисистемной зависимости. Взаимоотношения Совета Правосудия и органов самоуправления судебной власти РА носят формальный характер. Необходимо пересмотреть полномочия органов самоуправления судей, суть взаимоотношения с Советом Правосудия, обеспечивая внутреннюю независимость судей и способствуя развитию гарантий самоуправления судебной власти.

2. Совет Правосудия РА в основном состоит из представителей судебной власти и в составе совета судьи составляют большинство. В отдельных подразделениях, действующих в составе Совета, судьи также составляют большинство. Все это способствует сосредоточить судебную власть в руках судей. В то время, как в развитых странах, где данный орган прошел долгий путь развития и усовершенствования, в составе Совета включены имеющие огромный профессиональный опыт юристы, специалисты по праву, адвокаты и лица, имеющие высокий авторитет в сфере государственного управления. В результате исследования находим, что Совет Правосудия РА также должен состоять из профессиональных юристов, профессоров, адвокатов, психологов, лиц, имеющих многолетний опыт работы судьи. Последний поможет также широким слоям общества – в отношении судебной власти осуществить общественный контроль и все это будет способствовать восстановлению доверия общества по отношению судебной системы.

3. В функциях Совета Правосудия РА первичной должна быть не его консультативный характер, а наиболее важность его мнения и общеобязательность его решений. Если сравнить с иными ветвями государственной власти, то увидим, что в отличии двух других, судебная власть, в смысле как формирования, и как деятельности, имеет относительную независимость. Не стоит забывать, что 9 из 14-ти членов совета являются судьями и назначаются общим собранием судей. То есть, судьи назначают судей. Государственное правление становится эффективным только тогда, когда действует четкая система противовесов. В результате сравнительного анализа предлагаю увеличить число членов Совета Правосудия РА и в результате конституционных реформ за Советом закрепить соответствующие правовые средства, для организации и управления судебной власти.

4. Со стороны председателя кассационного суда созыв и ведение заседаний Совета Правосудия, а также председательство общего собрания судей и совета председателей судей нарушает принцип внутренней независимости судебной власти. Председатель кассационного суда, предусмотренным законом порядком, имеет широкий спектр полномочий, как с точки зрения правления судебной системы, так и с точки зрения направленности деятельности Совета Правосудия. В то время, когда последний, в меру своей должности, должен нести ответственность только за решение задач, поставленных перед кассационным судом и за обеспечение эффективной деятельности суда. В правовых нормах Судебного кодекса есть относящиеся Совету Правосудия непонятные положения, которые в первую очередь нарушают эффективное осуществление стратегической программы 2012-2016 годов судебных и правовых реформ РА. Вышеупомянутые правовые нормы председателю кассационного суда РА дают возможность играть ведущую и направляющую роль в системе судебной власти. В качестве основы предстоящих правовых реформ предлагаю исключить любую возможность вмешательства председателя кассационного суда РА в деятельность Совета Правосудия.

ARAKEL A. ARAKELYAN
THE PROBLEMS OF FORMATION AND ACTIVITY OF COUNCIL OF
JUSTICE IN THE REPUBLIC OF ARMENIA
(A COMPARATIVE LEGAL ANALYSIS)

SUMMARY

The study of this entity's activity will allow to understand the real course of realization the problems to be solved by the Council of Justice of the Republic of Armenia, the latter's activity efficiency, the shortcomings and omissions available, the approaches and view points of foreign countries, the best experience and efficient problem solving versions.

The structure and contents of the thesis allow the many-sided and complete detection of study subject materials. It consists of introduction, three chapters, seven paragraphs in total, conclusion, bibliography, abbreviations and appendice.

So, generalizing the researches, the author came to the following conclusions:

1. As constitutional entity the Council of Justice of the Republic of Armenia has got the limit of its authorizations fixed by the constitution, as well as the activity order determined by the legislation. The latter has been created in the difficult political conditions and in the reorganization period of legal and judicial system. In spite of the initial goals of council creation, it should be surely stated that the Council of Justice of the Republic of Armenia has no necessary functions for acting as an entity forming and realizing the judicial and legal policy of the state. The Council of Justice of the Republic of Armenia should not be the stage of struggle between the different branches of the power, it should be national authority independent of all the branches of power, which will be able to increase the professionalism of judges, provide the independence of judicial power and justice efficiency. Irrespective of today's reality, as well as taking into consideration the involvement level of the Council of Justice of the Republic of Armenia to the formation and realization of judicial and legal policy of the state, we are sure that the Council of Justice of the Republic of Armenia should act in the active subject role of judicial and legal policy, which will assist the improvement and increase of efficiency of judicial and legal system of the state. The judicial authority self-governing entities activity cannot limit the independence of the judge. And the analysis of the legislation and taking into consideration the Armenian reality, should be stated that the legislative authorizations of self-governing entities of judicial power allow those authorities to create structural subordination and intersystem dependency atmospheres in judicial system nowadays. The Council of Justice and self-governing entities of judicial power are just formality. The authorizations of judges, self-governing entities, the interrelations with Council of Justice should be reviewed, providing the internal independence of judges and assisting the development of guarantees of judicial power self-governance.
2. The Council of Justice of the Republic of Armenia is mainly formed of the

representatives of judicial power and the judges in the council are majority. The judges are again majority in the separated subdivisions operating in the staff of council. All this encourages the centralization of judicial power in judges hands. Meanwhile, in developed countries, where this authority has underwent long way of development and improvement, long-term work experience holder lawyers, law specialists, advocates and persons having good reputation in governmental field are involved in the staff of the council. As a result of the research we think that the Council of Justice of the Republic of Armenia should be consisted of professional lawyers, university professors, advocates, psychologists, persons having long-term work experience in the posts of judges. The latter will help the large classes of society to realize public control over the judicial power and all this will assist the restoration of society's trust towards the judicial system.

3. In the functions of RA CoJ the first place should be given not to its advisory character but to the more importance of its viewpoint and to the binding force of its decisions. As compared with other branches of the State power, judicial authority will prove to have relative independence in both aspects: establishment and activities, unlike the two others. It should be reminded that 9 of 14 members of the council are judges and they are assigned by the General Meeting of Judges. That is, judges assign judges. State government is efficient only when a system of definite counterbalances is available. As a result of comparative analysis I suggest increasing the number of RA CoJ members and in the result of constitutional reforms granting appropriate legal measures to the Council for organization and governance of the judicial authority.

4. The fact that the president of the Cassation court convenes and holds the sessions of the CoJ as well as presides the General Meeting of the judges and council of court presidents breaks the principle of internal independence of the judicial authority. The president of the Cassation court has a wide range of powers stipulated by the constitution in the aspects of governing the judicial authority as well as running the CoJ activities. Meanwhile the latter should be liable *ex officio* only for settling issues submitted to the Cassation court and for provision of the court's effective activity. There are incomprehensible provisions in legal norms in the Judicial Code referring to the CoJ, which first of all misrepresent RA judicial and legal reforms effective implementation of 2012-2016 strategic plan. The above mentioned legal norms give opportunity to the president of Cassation court to have a primary and leading role in the judicial system. As a cornerstone of forthcoming legal reforms I do suggest excluding any opportunity for the president of the Cassation court of interference in the activities of the CoJ.